

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՋԳԵՆ ԳԱԳԻԿԻ

ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱԽԱՂԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ մանկավարժական
գիտությունների թեկնածու,
դոցենտ Արտակ Ստեփանյան

ԵՐԵՎԱՆ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
- II. ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- III. ԿՈՆԿՐԵՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- IV. ՖՈՒՏԲՈԼԻ ՏԱԿՏԻԿԱ
- V. ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ
- VI. ԳՆԱՀԱՏՈՒՄ
- VII. ԴԱՍԻ ՊԼԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած մարզածն ֆիզիկական զարգացման և զանգվածների առողջության ամրապնդման միջոց է: ՀՀ-ում ֆուտբոլով զբաղվում են հազարավոր մարդիկ, այն առաջատար տեղ ունի ֆիզիկական դաստիարակության համակարգում: Ֆուտբոլը այն մարզաձևերից մեկն է, որ սիրում են և խղում թե տղաները թե աղջիկները:

Կրտսեր տարիքի երեխաների, համակողմանի դաստիարակությունը եղել և լինելու է հասարակության ուշադրության կենտրոնում:

Հայաստանի հանրապետության «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարությունը հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիայի հետ միասին 2009 թվականին մշակվեց համալիր ծրագիր ֆուտբոլ մարզածնը ներառելու Հայաստանի հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրում:

Ֆուտբոլը թիմային խաղ է: Ֆուտբոլում հաջողության հասնելու համար անհրաժեշտ են խաղադաշտում գտնվող բոլոր տասնմեկ ֆուտբոլիստների համաձայնեցված և միասնական գործողությունները: Վերջին տասնամյակում նկատվում է խաղի լարվածության աճ, որը դրսևորվում է խաղի տեմպի բարձրացումով, առանց գնդակի տեղաշարժերի թվի ավելացումով, ինչպես նաև տեխնիկա-տակտիկական հնարքների կատարման արագության մեծացումով:

Ժամանակակից ֆուտբոլն աթլետիկ խաղ է, որը խաղացողներից պահանջում է շարժողական մեծ պատրաստականություն և ֆունկցիոնալ մեծ կարողություններ, ինչպես նաև բարձր ֆիզիկական տվյալներ: Ֆուտբոլում մարզիկի հիմնական աշխատանքը տեղաշարժերն են ամբողջ դաշտով: Սակայն բազմաթիվ տեղաշարժերից բացի՝ խաղի ընթացքում ֆուտբոլիստները կատարում են զանազան տեխնիկա-տակտիկական գործողություններ: Խաղի ընթացքում բոլոր տեխնիկա-տակտիկական գործողությունների հաճախականությունը հետևյալ պատկերն ունի՝ գնդակի փոխանցումներ, գնդակի կասեցումներ, վարումներ, շրջանցումներ, հարվածներ դարպասին վերջում՝ այլ գործողություններ:

Ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ավելի հասանելի և պարզունակ է դառնում տեսական գիտելիքների մատուցումը կրտսեր տարիքի երեխաներին/ տեսանյութեր, համակարգչային անիմացիաներ/:

Տուտբոլը որպես թիմային խաղ դաստիրակում է ընկերության և փոխօգնության զգացում, ղարգացնում է կամային այնպիսի հատկանիշներ , ինչպիսիք են պատասխանատվությունը, հարգանքը, կարգապահությունը, ակտիվությունը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ֆուտբոլի դասերի ընթացքում լուծվում են տարբեր խնդիրներ .

1. Դասերին առավելապես դրվում են օրգանիզմի կենսական հզորացման և շարժողական պաշարի հարստացման խնդիրներ:

2. Ընդհանուր և հատուկ ֆիզիկական (տեխնիկական և տակտիկական) պատրաստակամություն և նոր հնարքների ու գործողությունների ուսուցման խնդիրներ:

3. Մրցութային գործողությունների տիրապետման խնդիրներ:

4. Դասերի ընթացքում ոգևորել և խրախուսել

Դասի խնդիրները լուծվում են նրանց համապատասխան վարժությունների, իրագործման մեթոդների ու մեթոդական հնարքների միջոցով: Դասի խնդիրների ճիշտ ընտրությունը յուրաքանչյուր դասի արդյունավետության գլխավոր պայմանն է:

Ուսումնական դասերի խնդիրները հիմնականում ձևակերպում են «ուսուցանել», «դաստիարակել», «ծանոթացնել», «յուրացնել», «ամրապնդել», «կատարելագործել» տերմիններով: Երբեմն վարժությունն ուսուցանվում է մասնատված: Այդ դեպքում խնդիրը կլինի առանձին մասերի ուսուցումը: Եթե օգտագործվում է «ուսուցանող ծրագիր», ապա խնդիրը կլինի առանձին «տարրերի» ուսուցումը:

ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Տեխնիկա» տերմինը առաջացել է հունարեն «տեխնե» բառից, նշանակում է արվեստ, վարպետություն:

Ֆուտբոլում տեխնիկական հատուկ հնարքների այն համալիրն է, որը գործադրվում է խաղն արդյունավետ վարելու համար: Տեխնիկական հնարքը խաղային որոշ խնդիրներ լուծող շարժողական գործողություն է: Յուրաքանչյուր տեխնիկական հնարք կարող է կիրառվել խաղային տարբեր իրավիճակներում, որով էլ պայմանավորված է դրանցից յուրաքանչյուրի կատարման եղանակով:

«Տեխնիկա» հասկացությունից զատ սպորտում գոյություն ունի նաև «տեխնիկական վարպետություն» հասկացությունը: Ֆուտբոլում այն որոշում է մարզիկի տեխնիկական պատրաստության բարձր մակարդակը, որի չափանիշներն են հնարքների և դրանց գործադրման եղանակների բազմազանությունը, գործողությունների արդյունավետությունը խաղի տարբեր իրավիճակներում:

Յուրաքանչյուր տեխնիկական հնարքում կարելի է առանձնացնել երեք փուլ՝ նախապատրաստական, հիմնական և եզրափակիչ: Դրանք տարբերվում են շարժումների առանձնահատկություններով և մասնավոր շարժողական խնդիրներով:

Պատանի ֆուտբոլիստների տեխնիկական պատրաստությունը բարդ և տևական գործընթաց է: Այն նախատեսում է որոշակի խնդիրներ, բովանդակություն և մեթոդներ, որոնք բազմամյա պատրաստության տարբեր փուլերում տարբեր են:

Սկզբնական պատրաստության փուլում ուսուցումն անհրաժեշտ է սկսել տեղաշարժերի տեխնիկայից՝ վազք, կանգառներ, շրջադարձեր և այլն: Դրան զուգահեռ՝ երեխաները յուրացնում են ֆուտբոլի տեխնիկայի հիմունքները:

Տեխնիկայի հիմնական տարրերից կարելիորագույնը ճիշտ կատարել փոխանցում և կասեցում, մարմնի տարբեր մասերով: Տեսանյութերի, նկարների և համակարգչային անիմացիաների միջոցով կարելի է տեսական գիտելիքներ հաղորդել երեխաներին, որոնք ավելի արդյունավետ ազդեցություն կունենան տեխնիկայի զարգացման և ուսուցման գործնթացում:


Մասնագիտացման փուլում պատանի ֆուտբոլիստները ավելի մանրակրկիտ են սովորում և հետագայում ամրապնդում նախորդ փուլում յուրացրած տեխնիկա-

կան հնարքները: Զուգահեռաբար ծանոթանում են մյուս հնարքներին՝ պահպանելով դիդակտիկ սկզբունքը՝ պարզից բարդ:

Սպորտային կատարելագործման փուլում տեխնիկական պատրաստականությունն ավելի է կատարելագործվում:

Տեխնիկական պատրաստականությունը ենթադրում է խաղի ընթացքում կիրառվող տեխնիկական հնարքների բազմազանություն՝ արդյունավետություն, կայունություն և հուսալիություն:

Տուտբոլ խաղի տեխնիկական բաժանվում է տարբեր խմբերի ու ենթախմբերի, որոնք ներկայացնում են ստորև.



ՖՈՒՏԲՈՒԼԻ ՏԱԿՏԻԿԱ

Տակտիկա բառն ունի հունական ծագում և բառացի թարգմանությամբ նշանակում է զորք դասավորելու և մարտը վարելու արվեստ:

Ֆուտբոլի տակտիկան անհատական, խմբայն և թիմային գործողությունների համագործակցությունն է հարձակման և պաշտպանության ընթացքում, խաղում վերջնական նպատակի հասնելու համար: Տակտիկայի հիմնական խնդիրն է՝ որոշել ու օգտագործել խաղը վարելու միջոցները և ձևերը կոնկրետ պայմաններում, կոնկրետ մրցակցի դեմ: Խաղի տակտիկայի ընտրությունը կախված է մի շարք գործոններից, որոնց թվում են սեփական թիմի կարողությունները, մրցակցի խաղի առանձնահատկությունները, հանդիպման նշանակությունը, թիմի բարոյահոգեբանական վիճակը, միասնական լինելը և այլն: Խաղի տակտիկական միջոցներն են համարվում բոլոր տեխնիկական հնարքները: Եթե տեխնիկական պատրաստությունն ուղղված է շարժումների կառուցվածքի կատարելագործմանը, ապա տակտիկական պատրաստությունը հնարավորություն է տալիս խաղում նպատակասլաց օգտագործել այդ հնարքները: Անհատական գործողությունները՝ առանձին խաղացողի գործողություններն են՝ որոնք ուղղված են խաղի որոշակի պահին որոշակի տակտիկական խնդրի լուծմանը:

Խմբային գործողությունները երկու կամ ավելի խաղացողների այն փոխգործողություններն են, որոնք հարձակման կամ պաշտպանության ժամանակ լուծում են որոշակի խնդիրներ:

Թիմային տակտիկական գործողությունները թիմի բոլոր խաղացողների փոխգործողություններն են, որոնք ուղղված են թիմային ընդհանուր խնդրի լուծմանը: Թիմային գործողությունները իրականացվում են տակտիկական համակարգի միջոցով, որը ներառում է դաշտում թիմի խաղացողների դասավորությունը, յուրաքանչյուրի որոշակի պարտավորությունները և գործողությունների շրջանակը:

Խաղի վարման եղանակը՝ մրցակցի դեմ օգտագործվող անհատական, խմբային և թիմային գործողությունների առանձնահատկությունն է:

Խաղաոճը թիմի խաղին բնորոշ առանձնահատկությունն է: Այն կարող է լինել հարձակողական, պաշտպանական, կոմբինացված (համակցված), անհատական և այլն:

Մարզիչը նախքան խաղի տակտիկան ընտրելը պետք է ամպայման հաշվի առնի թիմի ֆիզիկական տվյալները և արդյոք կարող է թիմը կատարել իր առջև դրված տակտիկական առաջադրանքները:


Ժամանակակից ֆուտբոլը ավելի արագ և դինամիկ է դարձել քան նախկինում: Խաղի վարման տեմպը որոշվում է խաղային գործողությունների կատարման արագությամբ: Կախված խաղի ընթացքի, խաղացողների հոգնածության և այլ հանգամանքներից, խաղի տեմպը բարձրացվում է կամ հակառակը՝ իջեցվում:

Հասկանալի է, որ տակտիկայի միջոցով լուծվում են որոշակի մրցակցի դեմ որոշակի խաղի համար նախանշված խնդիրները: Մրցումները ֆուտբոլում երկարատև են՝ առաջնության, գավաթի խաղեր, տարբեր մրցաշարեր: Երկարատև մրցումներում վերջնական նպատակին հասնելու համար թիմը պետք լիարժեք նախապատրաստվի և ճիշտ բաշխի իր ուժերը: Հենց ստրատեգիան է օգնում երկարատև մրցումների ընթացքում լուծելու այդ խնդիրները: Տակտիկան ստրատեգիայի մասն է և ենթարկվում է նրան: Ստրատեգիան որոշում է երկարատև մրցումներին նախապատրաստվելու հիմնական ուղղությունը, նախատեսում է ուժերի նպատակահարմար բաշխում երկարատև մրցումների ընթացքում, բոլոր պայմանների լիարժեք և լավագույնս օգտագործում վերջնակա նպատակին հասնելու համար:

Տակտիկան սերտորեն կապված է ֆուտբոլիստի տեխնիկական և ֆիզիկական պատրաստության հետ: Տեխնիկական հնարքների բազմազանությամբ, դրանց կատարյալ տիրապետումով է պայմանավորված տակտիկական գործողությունների քանակը և արդյունավետությունը: Իսկ տակտիկական գործողությունների իրականացումը կախված է նաև ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության մակարդակից:

Ֆուտբոլի տակտիկան բաղկացած է երկու բաժնից՝ հարձակման և պաշտպանության տակտիկայի, որի ամբողջական դասակարգումը տրված է սխեմայում.

ՖՈՒՏԲՈԼԻ ՏԱԿՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ



ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Ֆուտբոլում ուսուցման և մարզման արդյունավետությունն էապես պայմանավորված է դրանց կիրառման մեթոդներով՝ մարզամիջոցների օգտագործման եղա-

նակներով, որոնց օգնությամբ ֆուտբոլիստները յուրացնում և կատարելագործում են խաղի տեխնիկան, մշակում իրենց շարժողական ընդունակությունները:

Ֆուտբոլիստների պատրաստության գործընթացում կիրառվում է մեթոդների երեք խումբ՝ խոսքի, զննման և գործնական:

Խոսքի մեթոդներն են զրույցը, բացատրությունը, դասախոսությունը, հրահանգը, կարգադրությունը, ցուցումը և վերլուծությունը:

Զննման մեթոդներն են վարժությունների անմիջական ցուցադրումը, նկարների, ուսումնական ֆիլմերի, տեսաֆիլմերի ցուցադրումը, մրցումների դիտումը և գործողությունների ցուցադրումը մակետի վրա:

Գործնական մեթոդները բաժանվում են երկու խմբի՝

- Մեթոդներ, որոնք միտված են ֆուտբոլիստի տեխնիկայի և տակտիկայի տիրապետմանը և կատարելագործմանը.
- Մեթոդներ, որոնց օգնությամբ մշակվում են տարբեր շարժողական ընդունակությունները:

Առաջին խմբին են դասվում ուսուցման ամբողջական և մասնատված մեթոդները:

Երկրորդ խմբին են դասվում մեթոդների երկու հիմնական խումբ՝ չընդհատվող և ինտերվալային:

Այս մեթոդներից բացի՝ գոյություն ունեն դրանց տարատեսակները՝ հավասարաչափ, փոփոխական, կրկնողական, շրջանաձև, համակցված:

Որպես ինքնուրույն գործնական մեթոդներ՝ առանձնացվում են նաև խաղային, մրցութային և համակցված ազդեցության մեթոդները:

Ուսումնական մեթոդների համակարգված ուսուցումը նպաստում է դրանց կայուն ընկալմանը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատման հիմնական նպատակն է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման

աստիճանի ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը ուսումնական որակի բացահայտումն ու վերահսկումը:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գնահատման միջոցով պարզվում է յուրաքանչյուր սովորողի կողմից առարկայի չափորոշիչների և ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և ամբողջական պատկերը:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, անհատականությունը, ինչպես նաև, թե սովորողը բժշկական որ խմբում է ընդգրկված:

Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատումը իրականացվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով՝ 10 միավորային սանդղակով: Սովորողների ընթացիկ գնահատումը բաղկացած է երկու իրար լրացնող ձևերից՝

- Առաջադիմության միավորային գնահատում
- Ուսուցանող գնահատում:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ընթացիկ արդյունքների միավորային գնահատում կատարվում է հետևյալ ստուգման տեսակներով՝

1. Բանավոր հարցում,
2. Գործնական աշխատանք:

Գնահատման խնդիրներն են՝

- Գնահատում ենք գնահատական դնելու համար և ուսուցումը խթանելու համար:
- Գնահատում ենք սովորողի աշխատանքի արդյունքները և գործընթացը:
- Գնահատում է ուսուցիչը , սովորողը ինքն իրեն և խումբը:
- Գնահատում ենք գնահատականով, հետադարձ կապով:
- Գնահատում ենք սովորելուց առաջ , սովորելու ընթացքում, սովորելուց հետո:

Հանրակրթական դպրոցի սովորողների գնահատման հիմնական սկզբունքներն են.

- Արդարությունը
- Հուսալիությունը
- Անկողմնակալությունը
- Հավաստիությունը

- Հիմնավորվածությունը
- Մատչելիությունը
- Թափանցիկությունը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ 5-րդ

Դաս՝ հ. 17

Խնդիր՝

Ուսուցանել՝ ա. ուտնաթմբի ներսի մասով գնդակի վարումների տեխնիկան

բ. գլորվող գնդակին աջ և ձախ ոտքով հարվածների տեխնիկան

Նպաստել՝ արագության ընդունակության մշակմանը

Գույքը՝ գնդակներ, կոներ, կանգնակներ:

Դասի մասերը	Բովանդակությունը	Մեթոդական և կազմակերպչական ցուցումներ
Ներգրավիչ մաս՝ 9րոպե	<p>Շարում, զեկույց, դասի խնդրի հաղորդում, շարափոխումներ, բացազատում:</p> <p>Վարժություն 1 Ելման դրություն Կանդ զատած ոտքերով, ձեռքերը կողմ:</p> <p>Թեքում առաջ , ձեռքերը հասցնել ոտնաթաթերին Ելման դրություն Արտակորվել Ելման դրություն Վարժություն 2 Ելման դրություն ձեռքերը կողմ:</p> <p>Թափ աջ ձեռքով կողմգ; Ելման դրություն Թափ ձախ ձեռքով կողմ: Ելման դրություն Վարժություն 3</p>	<p>Շտկել թերությունները և ուշադրություն դարձնել ճիշտ կեցվածքին:</p> <p>Թեքվելիս ոտքերը չծալել, շնչառությունը ազատ է:</p> <p>Թափի ժամանակ իրանը պահել ուղիղ:</p>

	<p>Ելման դրություն Ձեռքերը գոտկատեղին: 1-2 կքանիստ՝ ձեռքերը կողմ: 3-4 ելման դրություն Վարժություն 4 Ելման դրություն Պառկել՝ հենվելով ձեռքերին 1-2 ծալել ձեռքերը 3-4 ելման դրություն Վարժություն 5 Ելման դրություն Ձեռքերը գոտկատեղին 1-4 ուսույուններ աջ ոտքով 5-8 ուսույուններ ձախ ոտքով 9-12 ուսույուններ զույգ ոտքով</p>	<p>Կքանստելիս բարձրանալ թաթերին, ծնկները զատել, իրանը ուղիղ: Աղջիկները կատարում են ազդրերին հենված. Ձեռքերը ծալել, արտաշնչել, տարածելիս շնչառել Կքանիստ վիճակից պառկել՝ հենվելով ձեռքերի վրա և կատարել հակառակ գործողությունը՝ ուսույունով</p>
<p>Հիմնական մաս 33 ր</p>	<p>1.Արագության մշակման վարժություններ ա. վազք՝ կից քայլերով և մեջքով առաջ բ. արագացումներ և պոկումներ գնդակով գ. պոկումներ գնդակով, հարված դեպի դարպասը՝ աջ և ձախ ոտքով 2.Աճպարարություն գնդակով, հաջորդաբար աջ և ձախ ոտքով, ազդրով, գլխով, մարմնի մյուս մասերով 3.Գնդակի վարում ոտնաթմբի ներսի մասով ա. գնդակի վարում շրջանաձև բ. գնդակի վարում ութնյակում գ. գնդակի վարում սահմանափակ տարածքում, խաղընկերներին շրջանցելով դ. փոխանցումավազքեր</p>	<p>Կիրառել հարահոս մեթոդը: Սրնքաթաթի հողը ձգված է:Կիրառել ճակատային մեթոդը: Գնդակը վարելիս գլուխը չկախել:Կիրառել խաղային և մրցութային մեթոդները:</p>

	<p>գնդակի վարումով, կոնկրետ հաղթահարումով հարված դեպի դարպասը:</p> <p>4. Հարված գլորվող գնդակին՝ աջ և ձախ ոտքով</p> <p>ա. հարված ոտնաթաթի ներսի և դրսի մասերով, զույգերով՝ 10-15մ հեռավորությունից.</p> <p>բ. հարված ոտնաթաթի ներսի և դրսի մասերով, զույգերով՝ 10-15մ հեռ. -ից</p> <p>գ. Հարվածներ դեպի դարպասը խաղընկերոջ օղային փոխանցումից հետո</p> <p>5. խաղ 5+1:5 հարաբերությամբ: Ուսուցանված հնարքների կիրառմամբ</p>	<p>Խաղացողներին տարբերելու համար օգտագործել բաճկոններ: Ուշադրություն դարձնել անհատական և խմբային տակտիկական գործողությունների մշակմանը: Կիրառել խաղային և մրցութային մեթոդները:</p>
Եզրափակիչ մաս 3ր	<p>Դանդաղ վազք, քայլք, շնչառական և թուլացնող վարժություններ, դասի ամփոփում, գնահատում, տնային հանձնարարություն:</p>	<p>Հետևել ազատ և անկաշկանդ շնչառությանը:</p>

Գրականության ցանկ

1. Հակոբյան Ա.Ա., Ֆուտբոլ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2009, 319 էջ
2. Հակոբյան Ա.Ա., Չափինյան Ա.Ա. , Ֆուտբոլ, Դասագիրք, Եր.: 2004, 261 էջ
3. Тюленков С.Ю., Губа В.П., Прохоров А.В. Теоретико-методические аспекты управления подготовкой футболистов. - Смоленск, 1997.
4. Суслов Ф.П., Холодов Ж.К. Теория и методика спорта. Учебное пособие для УОР, -М., Воениздат, 1997.
5. Футбол: Справочник / Авт. - сост. Чумаков Е.М. - М.: Физкультура и спорт, 1985.
6. Все о спорте. Справочник, 2-е изд., в 3-х т. - М.: Физкультура и спорт, 1988
7. Филин В.П. Теория и методика юношеского спорта. Учебное пособие для студентов ИФК. -М.: ФиС, 1987.
8. Юный футболист. Учебное пособие для тренеров. Под общ. ред. А.П.ЛаптеваиА.А.Сучилина.-М.:ФиС,1983.
9. Физкультура и спорт. Малая энциклопедия - М.: «Радуга», 1982.
10. Футбол: Учебник для институтов физической культуры. Под ред. Полишкиса М.С., Выжгина В.А. -- М.: Физкультура, образование и наука, 1999. -- 254 с., ил.
11. Спортивная жизнь России (1970е - 1990е гг.)
12. Физкультура и спорт (1970–е - 1990е гг.)
13. Советский спорт (1970–е - 1990е гг.)